2023

ԵԼԲ-ի ԱԿՆԱՐԿ

Եվրոպական
Ներդրումային բանկ

ԵՆԲ-Ի ԱԿՆԱՐԿ

© Եվրոպական ներդրումային բանկ, 2023 թ.
98 -100, boulevard Konrad Adenauer
L-2950 Luxembourg
+352 4379-1
info@eib.org
www.eib.org
twitter.com/eib
facebook.com/europeaninvestmentbank
youtube.com/eibtheeubank

Բոլոր իրավունքները պաշտպանված են
Իրավունքների և լիցենզավորման վերաբերյալ բոլոր հարցերը պետք է ուղղել publications@eib.org էլ. փոստի հասցեին

ԵՆԲ-ի գործունեության մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ուսումնասիրել մեր կայքը՝ www.eib.org
Նաև կարող եք կապվել info@eib.org էլ.փոստի միջոցով: Ստացեք մեր նորությունների էլեկտրոնային տեղեկագիրը հետևյալ հղումով՝ www.eib.org/sign-up

Բնության ուժը զարմանահրաշ է: Պատմության ամբողջ ընթացքում մարդիկ վախեցել են բնության փոթորիկներից, ջրհեղեղներից, երաշտներից ու հրաբխային ժայթքումներից: Այս ճգնաժամային ժամանակաշրջանում մենք հասկանում ենք, որ փոխարենը պետք է բնության հետ համահունչ լինենք և օգտագործենք նրա ուժը, եթե նախատեսում ենք հաղթահարել կլիմայի փոփոխությունը, որն առաջացրել ենք մեր իսկ գործողություններով: Եվրոպական ներդրումային բանկի ներդրումների ավելի քան կեսն այժմ ուղղվում է կլիմայի փոփոխության դեմ պայքարի և բնապահպանական կայունության ծրագրերին: Մեր առաջնահերթությունն է ֆինանսավորել «կանաչ» անցումը բնության կողմից վերականգնվող էներգիայի աղբյուրներին, երկրաջերմային էներգիայի փոխարինումը հիդրոէլեկտրաէներգիայով և քամու էներգիայով: Ահա թե ինչու այս տարի մեր գլխավոր հաշվետվությունների հենց շապիկներին պատկերում ենք բնության այս ուժերը:

© Լուսանկարների աղբյուրներ՝ ԵՆԲ, Eggtronic, Anaconda Biomed, GettyImages, Shutterstock:

Հրատարակվել է Եվրոպական ներդրումային բանկի կողմից:
Տպագրված է FSC® թղթի վրա:

pdf: QH-04-22-272-HY-N ISBN 978-92-861-5503-1 doi: 10.2867/258774

ԵՆԲ-Ի ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) Եվրոպական միության բանկն է: Մենք աշխարհի ամենամեծ բազմակողմանի ֆինանսական հաստատությունն ենք և կլիմայի փոփոխության դեմ պայքարի համար ֆինանսավորում տրամադրող ամենախոշոր կազմակերպություններից մեկը:

1958 թվականին իր հիմնադրումից մինչ օրս ԵՆԲ-ն Եվրոպայի և աշխարհի տարբեր երկրներում իրականացվող ծրագրերում ավելի քան մեկ տրիլիոն եվրոյի ներդրում է կատարել: Կլիմայի փոփոխության դեմ պայքարը մեր կատարած աշխատանքի մի մասն է ընդամենը: Մեր գործունեությունը կենտրոնանում է հետևյալ գերակա ոլորտների վրա՝ կլիմա և շրջակա միջավայր, զարգացում, նորարարություն և հմտություններ, փոքր և միջին բիզնես, ենթակառուցվածքներ և համախմբում:

Եվրոպական ներդրումային ֆոնդը, որը ԵՆԲ Խմբի անդամ է, մասնագիտանում է փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության ոլորտում՝ ֆինանսավորելով նոր բիզնեսներին, աճը, նորարարությունը, գիտական հետազոտությունները և փորձարկումները, զբաղվածությունը և տարածաշրջանային զարգացումը:

ԵՆԲ-ն աշխատում է այլ ԵՄ կառույցների հետ՝ խթանելու եվրոպական ինտեգրումը, զարգացումը Եվրոպական միությունում և աջակցելու ԵՄ քաղաքականության իրականացմանը: Այս աշխատանքը տարածվում է Եվրոպայից դուրս այլ երկրների վրա. ԵՆԲ-ն ակտիվ է ավելի քան 160 երկրում և ամեն տարի Եվրոպական միությունում ու ամբողջ աշխարհում բարելավում է միլիոնավոր մարդկանց կյանքեր:

Փոխկապվածությունը մեր պատմության ընթացքում եղել է ԵՆԲ-ի աշխատանքի հիմքը: Ամբողջ Եվրոպայում ԵՆԲ-ի ներդրումներն ավելի են մերձեցնում ԵՄ երկրներին: ԵՆԲ Գլոբալի միջոցով, որը ստեղծվել է 2022 թվականին մեր զարգացման ֆինանսավորման ազդեցությունը մեծացնելու նպատակով, մենք օգնում ենք հաղթահարել գլոբալ մարտահրավերները և խթանել աճն ու հնարավորությունը բոլոր մայրցամաքներում:

ԵՆԲ-ի աշխատանքը մշտապես հիշեցնում է ինտեգրված եվրոպական ջանքերի զորության մասին, երբ բազմակողմանիության արժեքը կասկածի տակ է դրվում:

ՔՈՎԻԴ-19-ի տարածմամբ աշխարհին առողջապահական և տնտեսական անհետաձգելի արտակարգ իրավիճակների առաջ կանգնեց: Վիրուսի տարածումը սահմանափակելու համար կար պատվաստանյութ և լուծումներ գտնելու հրատապ անհրաժեշտություն: ԵՆԲ-ն ֆինանսավորել է ՔՈՎԻԴ-19-ի դեմ պատվաստանյութերի մշակումն ու արտադրությունը և էական աջակցություն է ցուցաբերել առողջապահական այլ միջոցառումներին ինչպես Եվրոպական միության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: ԵՆԲ Խումբը նույնպես էականորեն նպաստել է ԵՄ միջոցառումներին, որոնք ուղղված են եղել եվրոպական բիզնեսների և տնտեսության վրա ճգնաժամի տնտեսական հետևանքները զսպելուն:

Երբ ՔՈՎԻԴ-19 համավարակի ստեղծած ճգնաժամը սկսել էր նահանջել, Ռուսաստանը ներխուժեց Ուկրաինա՝ հրահրելով նոր համաշխարհային ճգնաժամ: Ճգնաժամին միջազգային արձագանքման շրջանակում Բանկը ֆինանսական աջակցություն հատկացրեց Ուկրաինայի համար ԵՆԲ համերաշխության փաթեթի միջոցով՝ օգնելու երկրին բավարարել հրատապ կարիքները: Բացի այդ, համագործակցելով Եվրոպական հանձնաժողովի հետ, ԵՆԲ-ն աշխատում է հետագա ֆինանսավորում տրամադրել, որպեսզի օգնի կառավարությանը՝ Ուկրաինայում մնացած մարդկանց համար պահպանել կարևոր հանրային ծառայությունների տրամադրման շարունակականությունը:

Որպես աշխարհի ամենամեծ բազմակողմանի վարկատու՝ ԵՆԲ-ն օգնում է տնտեսություններին բարգավաճել, ստեղծել աշխատատեղեր և խթանել հավասարությունն ու կայունությունը: Մենք աշխատում ենք պետական և մասնավոր գործընկերների հետ և չափում ենք մեր հաջողությունը նրանով, թե որքանով է մեր աշխատանքն օգնում հասարակությանը և ավելի լավը դարձնում կյանքն այն մարդկանց համար, ում վրա այն ազդեցություն ունի:

ԵՆԲ-ի ներդրումներն ակտիվորեն աջակցում են անցումը կանաչ էներգիային: Որպես ԵՄ կլիմայի պաշտպան հանդիսացող բանկ՝ ԵՆԲ-ն ամբողջ աշխարհում իրականացվող իր գործողությունների միջոցով օգնում է կատարել Փարիզի համաձայնագրով (կլիմայի փոփոխության միջազգային պայմանագիր) ստանձնած պարտավորությունները և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները: Մենք խոստացել ենք, որ հաջորդ տասնամյակի ընթացքում ստեղծելու ենք կլիմային և շրջակա միջավայրի կայունությանն ուղղված 1 տրիլիոն եվրո արժողությամբ ներդրումների հնարավորություններ:

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ

260 միլիարդ եվրո

ԵՆԲ գործունեությամբ աջակցվող ներդրումներում

4,9 տրիլիոն եվրո

ընդհանուր հավաքված ներդրումներում

72,45 միլիարդ եվրո

ԵՆԲ Խմբի ֆինանսավորմանը

36,5 միլիարդ եվրո

կանաչ էներգիայի ներդրումներում

44,28 միլիարդ եվրո

հավաքվել է պարտատոմսերի շուկաներում

14,11 միլիարդ եվրո

փոքր բիզնեսների ֆինանսավորմանը

18,72 միլիարդ եվրո

էներգիայի կայուն աղբյուրների և բնական ռեսուրսների ֆինանսավորմանը

15,52 միլիարդ եվրո

նորարարությունը խթանելու, թվային և մարդկային կապիտալը հզորացնելու համար

5,3 միլիոն*

աշխատատեղ պահպանվել է փոքր բիզնեսում

* Թվերը վերաբերում են ՓՄՁ/միջին կապիտալիզացիայով ընկերություններին, որոնք միջնորդ կազմակերպությունների հետ մինչև 2022 թվականի ավարտը ստորագրված գործառնությունների պայմանագրերի արդյունքում ստացել են ԵՆԲ-ի աջակցությունը 2022 թվականին կամ ԵՆՖ-ի աջակցությունը 2021 թվականի հոկտեմբերից մինչև 2022 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում:

2022 թվականին ԵՆԲ ֆինանսավորումը կազմել է 65,15 միլիարդ եվրո, որը ներառում է ԵՆԲ Գլոբալի գործունեության համար հատկացված 10,82 միլիարդ եվրոն*

25,4 միլիոն

մարդ խմում է ավելի անվտանգ ջուր

8,5 միլիոն

տնային տնտեսություն էլեկտրաֆիկացվել է

17 միլիոն

մարդ օգտվում է ենթակառուցվածքների բարելավումից

6,6 միլիոն

նոր բաժանորդ ունի 5G շարժական կապի ծառայություններից օգտվելու հնարավորություն

570,1 միլիոն

լրացուցիչ ուղևորություն հասարակական տրանսպորտով

234 700

մարդու համար ջրհեղեղների ռիսկը նվազեցվել է

15 800 ՄՎտ

հզորությամբ էլեկտրաէներգիայի 100%-ով արտադրություն էներգիայի վերականգնվող աղբյուրներից

3,1 միլիոն

ուկրաինացի փախստական՝ անօթևանների ընդունման կենտրոններում կամ ժամանակավոր կացարաններում

150,4 միլիոն

մարդ օգտվում է ավելի որակյալ առողջապահական ծառայություններից, այդ թվում՝ ստանում է ՔՈՎԻԴ-19-ի պատվաստանյութեր

* Եվրոպական միության սահմաններից դուրս հատկացված ԵՆԲ Խմբի ընդհանուր ֆինանսավորումը, բացի ԵՆԲ Գլոբալից, ներառում է Եվրոպական միությունից դուրս ԵՆՖ-ի կողմից իրականացված ծրագրերը և ԵՆԲ-ի ծրագրերն Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի ներսում:

kraine

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Եվրոպական ներդրումային բանկը սատարում է Ուկրաինայի իշխանություններին և ժողովրդին: Այն աջակցում է անկախ Ուկրաինային:

Այս ճգնաժամին ԵՄ և միջազգային համակարգված արձագանքման շրջանակում Բանկն Ուկրաինայի համար ԵՆԲ համերաշխության փաթեթի միջոցով հավաքել է ֆինանսական աջակցություն՝ օգնելու կառավարությանը բավարարել իրացվելիության հրատապ կարիքները: Բացի այդ, համագործակցելով Եվրոպական հանձնաժողովի հետ, ԵՆԲ-ն աշխատում է հետագա ֆինանսավորում տրամադրելու ուղղությամբ, որպեսզի Ուկրաինայի կառավարությանը հնարավորություն ընձեռվի շարունակել կարևոր հանրային ծառայությունների մատուցումը երկրում մնացած մարդկանց, ապահովել սննդի, բժշկական պարագաների և վառելիքի հասանելիությունը՝ միաժամանակ աջակցելով նաև տրանսպորտի, էներգիայի, քաղաքաշինության և թվային ծրագրերին: 2022 թվականին հաստատվել է ֆինանսավորման երկու կարևոր փաթեթ.

- 668 միլիոն եվրո արժողությամբ առաջին փաթեթը տրամադրվեց պատերազմն սկսվելուց կարճ ժամանակ անց՝ օգնելու կառավարությանը վճարել հրատապ կարիքների համար:

- 1,59 միլիարդ եվրո արժողությամբ երկրորդ փաթեթը տրամադրվեց վնասված ենթակառուցվածքները վերանորոգելու և 2022 թվականի հուլիսին ստորագրված կարևորագույն ծրագրերը վերսկսելու համար: Այս փաթեթից հատկացվեց 1 միլիարդ եվրոյից մի փոքր ավելի՝ օգնելու երկրին վերանորոգել վնասված ճանապարհները, կամուրջները և երկաթուղիները:

Նաև ԵՆԲ ինստիտուտը՝ ԵՄ բանկի սոցիալական և մշակութային ճյուղը, պատերազմից տուժած ուկրաինացիներին 2,5 միլիոն եվրոյի հումանիտար օգնություն առաջարկեց: Բանկն օգնեց փոխել 59 միլիոն եվրո արժողությամբ դրամաշնորհների նպատակը և ուղղել դրանք Ուկրաինայում գնացքների ու ճանապարհների վերանորոգմանը, պատերազմից քանդված կամուրջների տեղում ժամանակավոր կամուրջների տեղադրմանը և իրենց տներից ստիպված հեռացած մարդկանց բուժսպասարկման ու կացարանային հարցերի բարելավմանը:

Արևելյան գործընկերության տեխնիկական աջակցության թրաստային ֆոնդից Բանկն Ուկրաինային առաջարկել է նաև մոտ 18 միլիոն եվրո արժողությամբ դրամաշնորհներ՝ օգնելու համայնքներին հոգալ իրենց տները լքած մոտ 700 000 մարդու կարիքները: Գործընկերության ֆոնդը ֆինանսավորում են Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Շվեդիան և Մեծ Բրիտանիան: ԵՆԲ-ն շարունակում է աշխատել եվրոպական գործընկերների հետ՝ ուսումնասիրելու Ուկրաինային և ուկրաինացի փախստականներին աջակցություն ցուցաբերելու հետագա հնարավորությունները:

ԵՆԲ-ն Spindiag GmbH ընկերությանը տրամադրում է 15 միլիոն եվրոյի վարկ՝ ֆինանսավորելու երիտասարդ ընկերության ՊՇՌ-ի վրա հիմնված ախտորոշիչ թեստավորման հարթակի մշակումը, որն օգտագործվելու է առողջապահական հաստատություններում:

ՔՈՎԻԴ-19

ԵՆԲ-ն եղել է ՔՈՎԻԴ-19-ի համավարակին Եվրոպական միության համաշխարհային արձագանքման առաջնագծում և միացել է միջազգային կազմակերպություններին, ինչպիսիք են Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, անհապաղ միջոցառումներ ձեռնարկելու համար:

Արտակարգ իրավիճակում ԵՆԲ Խմբի տրամադրած աջակցությունը փոքր և միջին ձեռնարկություններին և նորարարական ստարտափ ընկերություններին թույլ է տվել ներդրումներ կատարել՝ չնայած ծայրահեղ անորոշությանը: Մենք անկնալում ենք, որ մեր Եվրոպական երաշխիքային հիմնադրամի հետ 200 միլիարդ եվրոյի ֆինանսավորում կհավաքագրենք՝ աջակցելու համավարակի հետևանքով գոյատևման պայքար մղող կենսունակ ընկերություններին:

ԵՆԲ-ն օգնել է ֆինանսավորել նաև ՔՈՎԻԴ-19-ի պատվաստանյութերի մշակումը և գնումը, վիրուսի տարածումը սահմանափակելու լուծումները և ՔՈՎԻԴ-19-ի ճգնաժամի հետ կապված այլ հանրային առողջապահական ծրագրեր:

Համավարակի ժամանակ ԵՆԲ-ն ֆինանսավորել է իտալական Eggtronic ստարտափ ընկերությանը, որն ստեղծել է հոսանքի խնայողություն ապահովող կերպափոխիչ: Հոսանքի բարձր խնայողության շնորհիվ Eggtronic կերպափոխիչների ածխածնային արտանետումները շատ ավելի քիչ են, քան նմանատիպ սարքերինը:



ԿԼԻՄԱ ԵՎ ԷՆԵՐԳԻԱ

Կլիմայի փոփոխությունը մեր սերնդի ամենամեծ գլոբալ մարտահրավերն է: Կլիմային առնչվող նպատակներին հասնելը կորոշի մեր երեխաների բարեկեցությունը: Կլիմայի և էներգիայի հետ կապված ԵՆԲ-ի նպատակները նոր չափանիշներ են սահմանում Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Մենք այլևս չենք աջակցում հանածո վառելիքի նախագծերին և մինչև 2025 թվականը մեր ներդրումների 50%-ը կհատկացնենք կլիմայի փոփոխությունների դեմ պայքարին և կայունությանը:

Ուկրաինայում Ռուսաստանի ագրեսիան էներգետիկ ճգնաժամ ստեղծեց Եվրոպայի համար, ինչն էլ ավելի հրատապ դարձրեց գործողությունների դիմելու անհրաժեշտությունը: Ներխուժումը հիշեցրեց մեզ մեր էներգամատակարարման անվտանգության ապահովման կարևորության մասին. էներգիան անվտանգության խնդիր է, իսկ ածխածնազերծումը՝ ռազմավարական ինքնավարության խնդիր:

ԵՆԲ-ի գործունեությունն արագացնում է անցումը «կանաչ» էներգիային և տնտեսությունների ածխածնազերծումը: Մենք աջակցում ենք էներգիայի արդյունավետությունը բարձրացնող և վերականգնվող աղբյուրների օգտագործումը խթանող ծրագրերին, որոնք օգնում են կրճատել ածխածնի արտանետումները և ուժեղացնել մեր էներգետիկ անվտանգությունը: Մեր բոլոր գործողությունները նպաստում են սոցիալական և տնտեսական կայուն աճին:

ԵՆԲ ներդրումները նաև մեղմում են խոցելի համայնքների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունները՝ պաշտպանելով կենսաբազմազանությունը և խթանելով կայուն ֆերմերությունը: Մենք պահպանում ենք բնական ռեսուրսները և շրջակա միջավայրը դարձնում ենք անվտանգ ապագա սերունդների համար: Յուրաքանչյուր ծրագիր, որին աջակցում է ԵՆԲ-ն, ուղղված թե նորարարությանը, թե փոքր բիզնեսներին, թե ենթակառուցվածքներին, պետք է համապատասխանեցվի կլիմայի վերաբերյալ մեր նպատակներին:

ԵՆԲ-ն աջակցել է Anaconda իսպանական նորարարական ընկերությանը, որի մշակած ծախսարդյունավետ բուժումը բժիշկներին օգնում է կյանքեր փրկել ու նվազեցնել ինսուլտից հետո առաջացող հաշմանդամության հավանականությունը:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նորարարությունը պահպանում է Եվրոպայի մրցունակությունը և ստեղծում է բարձր վարձատրվող աշխատատեղեր: ԵՆԲ-ն աջակցում է նորարարության տարբեր փուլերում՝ սատարելով կենսամակարդակը բարելավող գաղափարներին:

Մենք աջակցում ենք ինչպես լայնածավալ գիտական հետազոտություններ և փորձարկումներ կատարող, այնպես էլ՝ մասնագիտացած փոքր ընկերություններին: Հեռահաղորդակցության, ավիացիայի, բժշկության, թվայնացման և այլ ոլորտներում մեր ներդրումները չափանիշ են, որոնք մասնավոր հատվածից լրացուցիչ ֆինանսավորում են ներգրավում այդ ծրագրերի համար: ԵՆԲ Խումբը եվրոպական ընկերություններին հնարավորություն է տալիս ստեղծել ու մշակել նորագույն տեխնոլոգիաներ:

ԵՆԲ վարկերի միջոցով համալսարանները կառուցում և ընդլայնում են իրենց հետազոտական լաբորատորիաները, իսկ ստարտափ ընկերությունները մեծացնում են իրենց աշխատակազմը և նորացնում իրենց սարքավորումները: ԵՆԲ-ի աջակցությամբ նորագույն գաղափարները վերածվում են հաջողակ բիզնեսի:

ԵՆԲ-ն փոքր ձեռնարկությունների առաջատար վարկատուն է Արևմտյան Բալկաններում՝ օգնելով մոտ 30 000 ընկերության և պահպանելով կես միլիոն աշխատատեղ: Մեր աշխատանքի արդյունքում Սերբիայի ավելի քան 1 800 դպրոց ունի ավելի արագ ինտերնետային կապ և ավելի լավ թվային սարքեր, ինչն օգնել է ուսուցիչներին համավարակի շրջանում աշակերտներին առաջարկել հեռավար ուսուցում տանը:

ՆԵՐԱԾՈՒՄ

ԵՆԲ-ն զորացնում է փոքր բիզնեսներին ու երիտասարդներին և աջակցում է կին ձեռներեցներին՝ ապահովելով նրանց համար վարկերի և քոուչինգի հասանելիությունը: Ցածր եկամուտ ունեցող մարդկանց, ինքնազբաղվածների և միկրոձեռնարկությունների համար մենք հնարավոր ենք դարձնում ֆինանսավորում և բիզնես խորհրդատվություն ստանալը, որպեսզի նրանց ծրագրերը հաջողության հասնեն:

Սովորաբար մենք վարկ ենք տրամադրում ծրագրի արժեքի կեսից ոչ ավել: ԵՆԲ-ի ներգրավվածությունը պետք է ծառայի որպես կատալիզատոր՝ նպաստելով մասնավոր հատվածի առավել չափով ներգրավմանը և մեծացնելով ներդրումը որևէ ծրագրում:

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲ-ն գումար է հայթայթում կապիտալի միջազգային շուկաներում պարտատոմսեր թողարկելու միջոցով: Մեր վարկունակության գերազանց վարկանիշը թույլ է տալիս մեզ դրամական միջոցները հայթայթել լավ տոկոսադրույքներով, և այդ օգուտները փոխանցվում են հաճախորդներին:

Կապիտալի շուկաների գծով ԵՆԲ-ի փորձագետները ստեղծել և զարգացրել են «կանաչ» և կայուն պարտատոմսերի շուկաները: Մենք «կանաչ» պարտատոսմերի ամենամեծ վերազգային թողարկողն ենք, որով աջակցում ենք վերականգնվող աղբյուրներից էներգիայի ստացմանը, էներգիայի արդյունավետ օգտագործմանը, մաքուր ջրի ապահովմանը և սանիտարական պայմանների բարելավմանը:

Orange Money
5 000 F
TRANSFERT DE CREDIT & RECHARGE
100 F
Orange Money
100 F
HANFANG

Կոնգոյում փոքր բիզնեսները համավարակի ժամանակ ԵՆԲ-ից ստացան արտոնյալ տոկոսադրույքով վարկեր, որոնք օգնեցին այս ընկերություններին և նրանց համայնքներին՝ ի տարբերություն ոչ պաշտոնական վարկատուների շատ բարձր տոկոսադրույքների:

ԵՆԲ ԳԼՈԲԱԼ

ԵՆԲ Գլոբալը, որը ԵՆԲ-ի զարգացման ճյուղն է, ստեղծվել է 2022 թվականին՝ մեր զարգացման ֆինանսավորման ազդեցությունը մեծացնելու նպատակով: Նախորդ տասնամյակի ընթացքում (2012-2022) ԵՆԲ-ն ավելի քան 70 միլիարդ եվրո է ներդրել Եվրոպական միությունից դուրս գտնվող երկրներում՝ ամեն տարի մասնավոր հատվածից հավաքելով միլիարդների ներդրումներ: ԵՆԲ Գլոբալը մեծացնում է ԵՆԲ-ի ազդեցությունը՝ ավելի մոտենալով տեղական համայնքներին, ընկերություններին և հաստատություններին ողջ աշխարհում:

ԵՆԲ-ն կընդլայնի իր աջակցությունը միկրոֆինանսավորման տեղական կազմակերպություններին այն տարածաշրջաններում, որտեղ մարդիկ հաճախ բանկերին հասանելիություն չունեն: Երբ մարդիկ կարողանում են վարկ ստանալ, մասնավոր ընկերություններն ավելի շատ աշխատողներ են ընդունում, կանայք դառնում են անկախ, տեղաշարժը կրճատվում է, և տնային տնտեսությունները կարողանում են դուրս գալ աղքատությունից:

Մենք կմեծացնենք ԵՆԲ-ի ոլորտային փորձագիտական գործունեությունը տեղական մակարդակում՝ մեր գիտելիքը և փորձը փոխանցելով տեղական գործընկերներին: Մենք տրամադրում ենք անկախ խորհրդատվություն՝ հիմնվելով բազմաթիվ երկրներում և ոլորտներում կատարած աշխատանքից ստացված փորձի վրա: Խորհրդատվական այս ծառայությունները կարող են ոչ միայն տրամադրվել ԵՆԲ-ի ֆինանսական պրոդուկտների հետ միասին, այլև առաջարկվել ցանկացած ֆինանսավորումից անկախ:

PEG
AWIAKANIA
MAX

Կլիմայի փոփոխությունը, ՔՈՎԻԴ-19-ի համավարակը և այլ ճգնաժամեր պահանջում են, որ միջազգային և ազգային գործընկեր բանկերի հետ մեր ներդրած միլիարդները վերածվեն տրիլիոնների՝ նոր գործընկերությունների և համաշխարհային ֆինանսական կառույցների հետ շարունակական աշխատանքի միջոցով: Ամենակարևորն այն է, որ ԵՆԲ-ի ներգրավվածությունը խրախուսում է մասնավոր հատվածի ներգրավումը, ինչը նոր ներդրում է ներգրավում:

Միայն զարգացող երկրներին որպես լրացուցիչ տարեկան ներդրում անհրաժեշտ է ավելի քան 2 տրիլիոն եվրո՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները և կլիմայի փոփոխության դեմ պայքարի վերաբերյալ Փարիզի համաձայնագրի հավակնությունները իրագործելու համար:

Որպես ԵՄ կլիմայական բանկ՝ ԵՆԲ-ն աշխատում է աջակցել «Եվրոպական կանաչ գործարք» նախաձեռնությանը (Եվրոպական Միության հայեցակարգ), որի համաձայն ԵՄ կլիմայի, էներգիայի, տրանսպորտի և հարկային քաղաքականություններով մինչև 2030 թվականը ջերմոցային գազերի արտանետումները պետք է կրճատվեն առնվազն 55%-ով (համեմատած 1990 թվականի ցուցանիշների հետ): Սակայն Եվրոպական միությունում արտանետումները կազմում են համաշխարհային ծավալի ընդամենը 10%-ը, հետևաբար՝ ԵՆԲ Գլոբալը կօգնի ընդլայնել ածխածնազերծմանն ուղղված Եվրոպայի ջանքերը նրա սահմաններից դուրս՝ աջակցելով «Եվրոպական կանաչ գործարք» նախաձեռնությանը:

ԵՆԲ Գլոբալն իր 300 միլիարդ եվրո արժողությամբ «Գլոբալ դարպաս» ծրագրով հանդիսանում է Եվրոպական հանձնաժողովի առանցքային դաշնակիցը՝ աջակցելով այն նախագծերին, որոնք բարելավում են համաշխարհային և տարածաշրջանային կապակցելիությունը թվայնացման, կլիմայի, տրանսպորտի, առողջապահության, էներգիայի և կրթության հարցերում: Զարգացման վարկավորումը և ֆինանսական գործընկերություններն արագացնում են աճը, գյուղական շրջանները դարձնում են ավելի բարգավաճ, քաղաքներին հնարավորություն են տալիս ավելի նորարար լինել և ուժեղացնում են տնտեսությունները:

ԵՆԲ Գլոբալի աշխատանքն աջակցում է այն երկրներին, որոնք փորձում են բարելավել գենդերային հավասարությունը և զորացնել կանանց աշխատավայրում՝ ներգրավելով կանանց կողմից ղեկավարվող բիզնեսներին: Մենք օգնում ենք միլիոնավոր մարդկանց, որոնց հասանելի չեն մաքուր ջուրը, էլեկտրաէներգիան, պատվաստանյութերը, լավ բուժսպասարկումը և թափոնների մշակման համապատասխան համակարգերը:

ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական ներդրումային բանկը հաշվետու է ԵՄ քաղաքացիներին: Բանկն աջակցում է այն ծրագրերին, որոնք նպաստում են Եվրոպական միության առաջնահերթություններին և նպատակներին՝ ներառյալ կլիմայի և բնապահպանական կայունությունը, նորարարությունն ու հմտությունները, ենթակառուցվածքները, փոքր և միջին ձեռնարկությունները, համախմբվածությունը և զարգացումը: ԵՆԲ-ն երաշխավորում է, որ իր կողմից աջակցություն ստացող բոլոր ծրագրերը, լինեն դրանք էներգետիկայի, տրանսպորտի, արդյունաբերության, թե գյուղատնտեսության ոլորտներում, համահունչ են Փարիզի համաձայնագրի նպատակներին: Մեր աշխատակազմում ընդգրկված են տնտեսագետներ, ինժեներներ, ֆինանսական վերլուծաբաններ և կլիմայի հարցերով մասնագետներ, որոնք ամբողջ աշխարհում ամեն օր աշխատում են տեղական փորձագետների, հաստատությունների և կառավարությունների հետ:

ԵՆԲ Խումբը բաղկացած է Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) և Եվրոպական ներդրումային ֆոնդից (ԵՆՖ):

ԵՆԲ-ն Եվրոպական միության բանկն է: Այն աշխարհի ամենամեծ բազմակողմանի փոխառուն է և վարկատուն: Գտնվելով Լյուքսեմբուրգում՝ Բանկն ունի տեղական և տարածաշրջանային գրասենյակների ամենամեծ ցանցը Եվրոպայում և նրա սահմաններից դուրս:

ԵՆՖ-ն աջակցում է փոքր ձեռնարկություններին՝ նրանց համար ապահովելով ֆինանսավորման մատչելիությունը Եվրոպայում և Եվրոպայից դուրս գտնվող մի շարք երկրներում: ԵՆՖ-ն նախագծում և մշակում է վենչուրային և աճի կապիտալ, երաշխիքներ և միկրոֆինանսավորման գործիքներ՝ խթանելու նորարարությունը և զբաղվածությունը:

ԵՆԲ Գլոբալը ԵՆԲ-ի միջազգային զարգացման ճյուղն է: Հիմնադրվելով 2022 թվականին՝ ԵՆԲ Գլոբալը շարունակում է ԵՆԲ-ի տասնամյակների հանձնառությունը, այն է՝ ֆինանսավորել զարգացումը, կլիմայի դեմ պայքարը, նորարարությունը և կայունությունն ամբողջ աշխարհում:

02/2023 HY pdf: ISBN 978-92-861-5503-1